


ԳԻՐԲ № 27

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱՅՐԵՐԻ  
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ԺՈՂՈՎՆԵՐԻ ՈՐԵՆՔԻ  
ՄԱՏՁԵԼԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԺԱԳԻՐ ԿՈՄԻՏԵՍ






ԳԻՐԲ № 27

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱՅՐԵՐԻ  
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ԺՈՂՈՎՆԵՐԻ ՈՐԵՆՔԻ  
ՄԱՏՁԵԼԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

16722  
A 23611



Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏՐՈՆԵՎԱՆ ԳՈՐԺԱԳԻՐ ԿՈՄԻՏԵՑԻ

ՀԱՅԳՈՒԼԻԳՐԱՖԻ I ՏՊԱՐԱՆ

ՊԱՏՎԵՐ 3859

ԳՐԱՌԵՊ. 829 Բ. ՏԻՐԱԺ 1300

## ՔԱՂՎԱԾՔ

### Հ.Ս.Խ.Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՑԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

«ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՑԻՆ ԱՌԸՆԹԵՐ 1928 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 5-ԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԳԱՎԳՈՐԾԿՈՄՆԵՐԻ ԿԱԶՄԲԱԺԻՆՆԵՐԻ ՎԱՐԻՁՆԵՐԻ, ԳԱՎՀՐԱՀԱՆԳԻՁՆԵՐԻ ՅԵՎ ԳԱՎԱՌԱԿԱՅԻՆ ԳՈՐԾԿՈՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՏԵՂԵՐԻՆ ՏՐՎԵԼԻՔ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» 1928 թ. ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի ՎՈՐՈՇՈՒՄԻՑ

### ԳՑՈՒՂԽՈՐՀՐԴՆԵՐԻ ՅԵՎ ԳՑՈՒՂ- ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՐԱԲԵՐՈՒ- ԹՅԱՆ ԱՍՊԱՐԻՋՈՒՄ

15. Արձանագրել, վոր գյուղնական խորհուրդների և հասարակական ժողովների մոխհարարելության հարցերը դեռևս կանոնավորված չեն. տեղ-տեղ նկատվում է հասարակական ժողովների անտեսումը գյուղխորհուրդների կողմից, իսկ շատ հաճախ գյուղխորհուրդներն իրենց իրավասության յենթակա հարցերը և նախաձեռնությունը գյուղհասարակական ժողովին են հանձնում :

16. Առաջարկել գավառակային գործկոմերին շարունակել իրենց ուժեղ հսկողությունն այդ ասպարիզում և վարել կազմակերպչական այնպիսի գիծ, վոր հասարակական ժողովների աշխատանքների ճիշտ դեկավորությունը գյուղխորհուրդների կողմից լիովին ապահովված լինի :

17. Գյուղխորհուրդների ղեկավարութեան առաջարկում նկատված բացերը վերացնելու համար, ժամանակին տալ գրավոր և կենդանի ցուցմունքներ:

ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի  
Նախագահի Տեղակալ՝ Հ. ԱԶՍՏԱՆ

ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի  
Քարտուղար՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ

# ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱՅՐԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՈՐԵՆՔԻ

## ՄԱՏՁԵԼԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մինչև 1927 թ. Հ. Ս. Խ. Հանրապետութեան որենսդրութեան մեջ գյուղական վայրերի քաղաքացիների ընդհանուր ժողովների, կամ դործածական լեզվով առած, գյուղական հասարակական ժողովների մասին հասուկ որենք, կանոնադրութուն գոյութուն չի ունեցել: Այդ հանգամանքը մի կողմից՝ անդրադառնում էր գյուղի հասարակական աշխատանքների կանոնավոր, որին աջակցելու ընթացքի վրա, իսկ մյուս կողմից՝ խառնաշփոթութուն էր մտցնում գյուղական հասարակական ժողովի և գյուղական խորհրդի փոխհարաբերութունների մեջ, թույլ չտալով թե՛ մեկին և թե՛ մյուսին արդյունավետ կերպով զբաղվելու այն հարցերով, վորոնք կանոնադրելու նրանց առաջ:

Այս անկանոն դրութեանը վերջ տալու, ինչպես նաև գյուղական աշխատավոր մասսաներին լայն չափով գյուղի հասարակական աշխատանքներին մասնակից տանելու, այդ աշխատանքները կանոնավորելու և նրանց որին աջակցելու տալու նպատակով, Հ. Ս. Խ. Հ. Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահութեանը 1927 թ. փետրվարի 23-ին հաստատեց և դործադրութեան դրեց «Գյուղական վայրերի քաղաքացիների ընդհանուր ժողովների» վերաբերյալ կանոնադրութունը:

## ԻՆՉ ՆՊԱՏԱԿԻ ՀԱՍԱՐ Ե ՀՐԱՎԻՐՎՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Գյուղի հասարակութեան մեջ ծագում են թե՛ տընտեսական, թե՛ կուլտուրական, թե՛ շինարարական և

թե՛ այլ կարևոր բնույթ ունեցող բազմաթիւ խնդիրներ :  
Գյուղին դպրոց և սեփաք, գյուղին խմելու ջուր և հարկավոր, գյուղը կարիք ունի գյուղատնտեսական աշխատանքի ձեռնարկումների, գյուղի բնակչութեան մաքրութեան համար անհրաժեշտ և բազմիք կառուցել, գյուղի հանդերը, անասունները պահելու, պահպանելու համար հանդապահներ, հովիտներ և հարկավոր վարձել, գյուղի ճանապարհները կարոտ են վերանորոգման ու հարթման, գյուղի տնտեսութեանն ուժեղացնելու համար կարիք և զբաղմունք կոտակերատիւ ընկերութեաններ կազմակերպելու, աշխատավոր գյուղացիներին անհրաժեշտ և վարկային և կոտակերատիւ այլ ընկերութեաններին մեջ քաշել և ալին—ահա հարցեր, վորոնք տուրյա կյանքում, յուրաքանչյուր որ ծեծում են գյուղացու գուռը և նրանից պահանջում այդ հարցերի քննութեան մեջ նրա ակախի մասնակցութեանը, նրա կենդանի, գործնական և նյութական սթանդարտութեանը :

Գյուղի ընդհանուր ժողովը հրավիրվում և հենց դրա համար, վոր քննութեան առնի հասարակական կյանքին վերաբերող նման հարցերը, յերբ հարցերի լուծման ու նրանց վերաբերյալ հանվելիք վորոշումների իրականացման հաջողութեանը պահանջում և, վոր գյուղական հասարակութեանն ակախի միջամտութեան ցույց տա, անհրաժեշտարար թելադրում և լսել նրա խոսքը, խորհուրդը, իմանալ նրա ցանկութեանը :

Վերցնենք մի այնպիսի կարևոր և անհրաժեշտ հարց, ինչպիսին և դպրոցի կառուցումը : Հաճախ գյուղացիները, նկատի առնելով պետութեան ֆինանսական ներկա պայմանները, վոր նա հնարավորութեան չունի յուրաքանչյուր գյուղում մոտիկ ապագայում դպրոցներ կառուցել, ցանկութեանն են հայտնում ինքնահարկման կարգով միջոցներ ստեղծել և հասարակական ուժերով ձեռնարկել դպրոցի կառուցման աշխատանքին : Այ-

հարցն իր դրական, հաջող և զործնական լուծումը կտրանա այն ժամանակ, յերբ գյուղի ընդհանուր ժողովը լայն կերպով քննութեան կառնի այդ և հենց ինքը կժամանանչի այն բոլոր աղբյուրները, վորտեղից կարելի յի վերցնել դրամական, նյութական միջոցները և անցնել գալրոցական շինքի կառուցման աշխատանքներին:

Գյուղի ընդհանուր ժողովի քննութեան առարկա կարող են լինել վո՛չ միայն գյուղական անմիջական կյանքին վերաբերող, հենց նույն գյուղում ծագող հարցերը, այլ և գալառակային, գալառային ու համապետական նշանակութիւն ունեցող հարցերը, յերբ դրանց քննութիւնը ընդհանուր ժողովների կողմից անհրաժեշտ կհամարվի համապետական շահերի տեսակետից: Յուրաքանչյուր գյուղացի, գյուղական հասարակութիւն պետք և լավ դիտակցի, վոր ինքը մի մասնիկն է ընդհանուր յերկրի և վոր նրա մասնակցութիւնը ընդհանուր խնդիրների քննութեան ու լուծման մեջ կարևոր ու անհրաժեշտ է: Յե՛վ իսկապես ի՞նչպէս կարող է, ասենք, Չանգեղուրի կամ Եջմիածնի գալառի այս կամ այն հասարակութիւնն անտարբեր մնալ դեպի այնպիսի մի համապետական, համամիութենական նշանակութիւն ունեցող խնդիր, ինչպիսին և գյուղատնտեսութեան փոխառութեանը մասնակցելու խնդիրը, վորի հաջող լուծումից է կախում թե՛ ամեն մի գյուղի և թե՛ ընդհանուր միութեան ամբապնդումը՝ տնտեսական, կուլտուրական և սոցիալ-քաղաքական տեսակետից: Այդպիսով գյուղական ընդհանուր ժողովները հրաժիրովում են քննութեան առնելու համապետական նշանակութիւն ունեցող կարևոր, ինչպէս նաև գյուղի հասարակական կյանքին վերաբերյալ հարցերը:

**ՈՎ Ե ՇՐԱՎԻՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ԺՈՂՈՎԸ ԳՅՈՒՂՈՒՄ**

Գյուղի ընդհանուր ժողով կարող է հրաժիրի

միայն գյուղական խորհուրդը հանձնին նրա նախադաս-  
 հուածքի կամ նախագահի և կամ գյուղական խորհրդի  
 լիազորը վերջինների հանձնարարութեամբ: Վոչ մի  
 գյուղացի, գյուղացիների վոչ մի խմբակ, հասարակա-  
 կան վոչ մի կազմակերպութիւն առանց գյուղխորհրդի  
 դիտութեան իրավունք չունի հրավիրել հասարակական  
 ընդհանուր ժողով և այնտեղ քննութեան դնել այս կամ  
 այն հարցերը:

Յեթե գյուղացիները ցանկութիւն ունեն այս կամ  
 այն հարցերի քննութեան համար ընդհանուր ժողով  
 հրավիրել, նրանք այդ մասին պետք է դիմեն գյուղա-  
 կան խորհրդին: Սա յեւ քննութեան առնելով դրա ան-  
 հրաժեշտութիւնը, հրավիրում և հասարակական ժո-  
 ղով: Յեթե այս կանոններով չեն վարվում, ժողովը չի  
 կարող համարվել որինական. այդ ժողովների վորո-  
 շումներն անվավեր են, վոչ մի ուժ ու նշանակութիւն  
 չունեն:

## ԻՆՉ ԴԵՊՔԵՐՈՒՄ Ե ՀՐԱՎԻՐՎ ՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Ընդհանուր կանոն է, վոր գյուղի ընդհանուր ժո-  
 ղովը պետք է հրավիրել վոչ ուչ քան ամիսը մեկ ան-  
 դամ: Գոյութիւն ունեցող այն յերեւոյթը, վոր հասա-  
 րակական ժողովը գյուղում հրավիրվում է սովորաբար  
 յերկու, յերեք, չորս ամիսը մեկ անգամ, պետք է հա-  
 մարել անկանոն: Դա ապացույց է, վոր այդ գյուղում  
 հասարակական աշխատանքները թույլ են ընթանում և  
 կապը գյուղական խորհրդի ու աշխատավոր գյուղացի-  
 ցիների միջև ամուր չէ:

Գյուղական խորհուրդը հրավիրում է նաև գյուղի  
 հասարակական ժողով ամեն մի հարկ յեղամ վեպում,  
 յերբ քննութեան առնվելիք հարցերն անհետաձեռելի չեն  
 և պահանջում են շտապ լուծում: Այդպիսի հարցեր

գյուղի ստաջ հաճախ են կանգնած լինում. հովիվէ հարցը, հանգապահի հարցը, ջրի սպասարժման հարցը, գիշերապահների հարցը և այլն: Այս հարցերից յարաբանչյուրը կենսական նշանակութիւն ունի ամբողջ հասարակութեան համար և նրանց քննութեան հետաձգումը կարող է քայքայել գյուղացիների անասութիւնը:

Գյուղի ընդհանուր ժողովը հրավիրվում է նաև այն դեպքում, յերբ այդ պահանջում է գյուղական ընդհանուր ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ընդհանուր թիվի մեկ հինգերորդ մասը: Յեթե գյուղում կան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող հինգ հարյուր հոգի, հերիք և, վեր հարյուր հոգի պահանջեն ժողով հրավիրել, և գյուղխորհուրդը պարտավոր է կատարել քաղաքացիների այդ սրինավոր պահանջը: Այդպիսի դեպքերում քաղաքացիները պետք է մասնանշեն այն հարցերը, վեր նրանք ստաջադրում են քննելու ժողովում:

## ՈՎ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԳՅՈՒՂԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

Գյուղի ընդհանուր ժողովին կարող են ներկա լինել միայն նրանք, վորոնք ուղտվում են ընտրական իրավունքներից: Այստեղից պարզ է, վոր ընտրական իրավունքներից զրկված քաղաքացիները մասնակցել չեն կարող ընդհանուր ժողովին, անգամ խորհրդակցական ձայնի իրավունքով: Սա անհրաժեշտ է նրա համար, վորպեսզի գյուղի կուլակը, շահագործողը հնարավորութիւն չունենա իր անմիջական մասնակցութեամբ աղղելու ընդհանուր ժողովի աշխատանքների վրա և իր տեսակետները թաղնված կամ ակնհայտնի կերպով անցկացնի այնտեղ: Յեթե ժողովին ներկա չեն լինում ընտրական իրավունքներից զրկված քաղաքացիները,

ժողովի նախագահութեանը պարտավոր և առաջարկել  
նրանց հետանալու ժողովից :

## ԳՅՈՒՂԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Ինչպէս ասիեց սկզբում, գյուղի բնահասնուր ժո-  
ղով հրափիրում և գյուղական խորհուրդը կամ գյու-  
ղական խորհրդի լիազորը վերջինի հանձնարարու-  
թյամբ: Ժողովը կարող և գումարով և մի տեղ կամ  
գյուղի դանազան թաղերում, յեթև գյուղը մեծ և և  
հնարավոր չե բոլորին հավաքել մի վայրում:

Ընդհանուր ժողով հրափիրելու մասին՝ գյուղա-  
կան խորհուրդը նախորոք պարտավոր և տեղեկացնել  
գյուղացիներին: Այդ նա անում և գյուղական կառա-  
քածուսներին միջոցով կամ համապատասխան հայտա-  
րարութեաններ կախելով աչքի բնկնող տեղերում:

Հայտարարութեանները պէտք և կախել միշտ վո-  
րոչ ու մշտական տեղում, վերջուցի հասարակութեան  
անդամներին համար սովորութեան դասնա ամեն ան-  
գամ աշխատանքի դնալիս կամ աշխատանքից վերա-  
դառնալիս անցնելու այնտեղ և հետեւելու՝ թե արդյոք  
հայտարարութեան կա՞ թե վոչ: Մեր գովառներում  
այդպիսի գյուղեր շատ կան, վորտեղ կիրառվում և այս  
ճեղանակը և գյուղացին առավտոյան վտոց դուրս  
գալիս հեռից արդեն նկատում և ծափն կամ աախ-  
տակին փակցրած թուղթը, վորով և բնականորեն հե-  
ռաքրքրվում և ու կարգում, իսկ յեթև՝ անդրադեա և,  
կողքին կանգնածին հարցնում և, թե ի՞նչ և զրված  
հայտարարութեան մեջ: Հայտարարութեաններին մեջ  
գյուղական խորհուրդը պէտք և մասնանշի, թե յե՞րբ  
և հրափիրում ժողով, վո՞րտեղ, ի՞նչ հարցեր են քն-  
թյան աննելու կամ, ինչպէս ասում են, ժողովի որա-

կարգը: Հայտարարութեան սրինակելի ձևը արվում է այս դրբույկի վերջում:

Ընդհանուր ժողովից մեկ ժամ առաջ գյուղական խորհուրդը պարտավոր է հրավիրման մասին հիշեցնել գյուղացիներին գարոցական զանգը հնչեցնելով: Առաջվա հին սովորութիւնը, այն է կտուր բարձրանալ և կանչով հրավիրել գյուղացիներին՝ կամաց—կամաց պետք է վերացնել գյուղական կյանքից:

Առանձին շատոյ գեղքերում գյուղական խորհուրդը կամ նրա լիազօրը կարող է հրավիրել ընդհանուր ժողով առանց նախապես հայտարարելու նրա որակարգը:

Գյուղի ընդհանուր ժողովը սրինական և համարվում, յեթե ներկա չէ ավյալ գյուղում կամ թաղում ապրող ընտրական իրավունք ունեցող անձերի առնչվածն 35 տոկոսը: Յեթե գյուղում կան ութ հարյուր ընտրական իրավունք ունեցող քաղաքացիներ, ժողովին պետք է ներկա լինեն առնվազն չերկու հարյուր ութանասուն հոգի, վարպետի ժողովը համարվի սրինական և իրավագոր լինի այս կամ այն վարձուները կայացնելու: Ժողովներին պետք է մասնակից դարձնել վորքան կարելի չէ շատ գյուղացիներ, իսկ դրա համար անհրաժեշտ է այնպես անել, վոր բոլոր գյուղացիները իմանան ժողովի մասին, անհրաժեշտ է ժողովը նշանակել այնպիսի որ և սրվա այնպիսի ժամանակին, չերը գյուղացիները ազատ են: Փորձը ցույց է տվել, վոր ժողովներին շատ մարդ է լինում, չերը ժողովները հրավիրվում են հանդատի որերին, կեսուրին, կամ չերեկոյան անասունները տեղավորելուց և աշխատանքները վերջացնելուց հետո: Ընդհանուր ժողովներ հրավիրելիս՝ գյուղական խորհուրդները այս հանդամանքի վրա մեծ ուշադրութիւն պետք է դարձնեն:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ  
ԴՐՎԵԼԻՔ ՈՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԵՐԸ ՊԵՏՔ Ե ՆԱԽՈՐՈՔ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԵՆ ՅԵՎ ՄՇԱԿՎԵՆ ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ  
ԿՈՂՄԻՑ

Գյուղական ընդհանուր ժողովներին առաջադրվելիք հարցերը գյուղական խորհուրդները կամ նրանց նախազանությունները պարտավոր են նախորոք ուսումնասիրել, քննության ատենի իրենց նիստերում և ապա խնամքով մշակված մտցնել ժողովի քննության: Տեղերում կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, վար մի շարք գյուղերում գյուղական խորհուրդներն աչքաթող են անում այս կարևոր հանդամանքը: Մրա հետևանքն այն է լինում, վար առաջադրված հարցերը մութ են մնում գյուղացիների համար, կամ նրանց լուծումը ստանում է վոչ ցանկալի ընթացք՝ առիթ տալով դանազան աղմուկների և աննորատակ վիճարանությունների: Այս յերևույթը մեր գյուղական կյանքից արմատախիլ անելու նպատակով, անհրաժեշտ է վար գյուղխորհուրդները ընդհանուր ժողովի քննության առաջադրելիք հարցերը նախորոք ուսումնասիրեն, մշակեն: Բերենք մի որինակ:

Յենթադրենք Լիճք-ի գյուղական հասարակությունը ցանկություն է հայանում դեպի հանդը տանող ճանապարհը հիմնովին լայնացնել, մաքրել քարերից, հարթել, վորպեսզի մարդիկ ու անասունները աղահամ անցնեն այնտեղից: Այդ ցանկությունների հիման վրա, գյուղական խորհուրդը, քննության ատենիով այդ հարցն իր նիստում, հանձնարարում է շին-սանիտարական սեկցիային կազմելու ճանապարհի վերանորոգման ծրագիրը, նախահաշիվը, այն է, քանի՞ կիրովետար տարածությամբ ճանապարհ պետք է վերանորոգվի, վո՞րքան ժամանակում, ի՞նչ քանակությամբ

քանՎորտիան ձևք, վո՞րքան գործիքներ, բեռնակիր անասուններ և այլ պարագաներ են պահանջվում: Մանրամասն կերպով մշակելուց հետո, դյուղական խորհուրդը այդ հարցը մտցնում է գյուղի ընդհանուր ժողովը քննելու համար: Ժողովը բանալուց հետո նախագահը կամ շին-սանիտարական սեկցիայի նախագահը, ընդգծելով ճանապարհ կառուցելու հասարակական ցանկութունը, զեկուցում է աշխատանքների ծրագրի, պահանջվելիք ծախքերի մասին. այնուհետև խնդրում է հասարակութանն առանց քաշվելու՝ արտահայտվել առաջադրված հարցերի շուրջը և համապատասխան վորոշում հանել, վորի վրա հենված գյուղական խորհուրդը կարող կլինի անցնել դործնական աշխատանքներին: Նման զեկուցում լսելուց անկասկած յուրաքանչյուր գյուղացու համար դժվար չի լինի վորոշելու, թե կարո՞ղ է ներկայումս նա մասնակցել աշխատանքներին, տանել այն ծախքերը, վոր դրվում է նրա վրա; թե պետք է այդ խնդիրը հետաձգել և մտածել նոր միջոցներ փնտսելու մասին:

Իսկ ինչպիսի սրտակեր կստանանք, յեթև հարցն առանց ուսումնասիրության դրվի ժողովում: Մեկը կասի, թե կառուցվող ճանապարհի յերկարությունը կես կիլոմետր է. մյուսը կպնդի, թե յերկու կիլոմետր է, յերրորդը կհայտարարի, վոր հարյուր բանվոր է պահանջվում, չորրորդը կհակաճառի նրան: Յեվ այսպես գործ անելու փոխարեն կգրադվեն վիճաբանություններով, կաղմկեն և, առանց գործնական վորոշում հանելու, կցրվեն տները դժգոհ թե՛ ժողովից և թե՛ գյուղխորհրդից:

Գյուղական խորհուրդները այս հանգամանքը պետք է նկատի առնեն և վոչ մի դեպքում հարցերը պատահական կերպով չմտցնեն ժողովի քննության: Այստեղից իհարկե չպետք է յեզրակացնել այն սխալ

միտքը, վոր յեթե գյուղական խորհուրդը մի հարց ե մտցնում կամ մի նախագիծ առաջադրում, այլևս իրավունք չկա ուրիշ հարցեր կամ ուրիշ նախագծեր առաջադրել: Հասարակութեան յուրաքանչյուր անդամ, վոր իրավունք ունի մասնակցելու ժողովին, կարող ե իր նախագծերն առաջադրել, գյուղխորհրդի կողմից մշակված որակարգի մեջ փոփոխութիւններ կամ լրացումներ մտցնելու համար առաջարկութիւններ անել:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿՍՐԳԻ ՄԱՍԻՆ

### Գյուղացիների մասնակցութիւնը

Գյուղի ընդհանուր ժողովը պետք ե բաց անի գյուղական խորհրդի լիազօրը, կամ ներկայացուցիչը: Այդպիսին կարող ե լինել և գյուղական խորհրդի անդամը և վոչ խորհրդի անդամը, սակայն այնպիսի անձնափոքութիւն, վոր վստահելի չե և վորին լավ ճանաչում ե գյուղական խորհուրդը կամ վերադաս մարմինը:

Նախքան ժողով բանալը՝ պետք ե հաշվել ներկայեղողների թիւը՝ պարզելու համար, թե ժողովն որինակա՞ն ե թե վոչ: Յեթե գյուղում կան ընտրական իրավունք ունեցող հինգ հարյուր քաղաքացի, ուրեմն ավյալ ժողովում պետք ե ներկա լինեն առնըվաղն հարյուր յոթանասուն հինգ հոգի (35 տոկոս), այլապես ժողովը պետք ե հետաձգվի և հայտարարվի նրա հրավիրման յերկրորդ ժամկետը, վորի մեջ մասնանշվում ե այն, վոր յերկրորդ ժողովը կհամարվի որինական անկախ ներկայեղողների թիւից: Այստեղ պետք ե ընդգծել, վոր շնորհիվ գյուղացիների յերբեմն թույլ մասնակցութեան ընդհանուր ժողովներին, վերջիններր հետաձգվում են, հարցերի քննութիւնը ձրգ-


ձրգվում, առիթ տալով զիտակից դուռդացիներին  
զժգոհելու: Այս յերևույթի դեմ պետք է կռվել,  
դշխալնորապես դուռդացուն հասկացնելու միջոցով,  
պարզարանելով նրան, վոր նման բացակայություն-  
ներն անդրադառնում են թե՛ իր անհատական և թե՛  
ընդհանուր հասարակության և համապետական աշ-  
խատանքների վրա. պետք է հասկացնել դուռդացուն,  
վոր հաճախակի բացակայության դեպքում նա կոտա-  
նա նկատողություն, իսկ լավ բան չէ, ամոթ է, յերբ  
մեկը հասարակության առաջ պարտավանք է ստա-  
նում: Ինչի՞ նման կլինի, յերբ շրջանում խոսեն, թե  
Մկրտիչին սեւացրին ժողովի առաջ անկանոն կերպով  
ժողով գալու համար: Այդպիսի մարդու վարքն ընկ-  
նում է թե՛ հասարակության, թե՛ հասարակական  
կազմակերպությունների և թե՛ դուռդի իշխանության  
առաջ: Այն վո՞ր մարմինն է, վոր այդպիսի դուռ-  
դացուն կընտրի իր կազմի մեջ. վո՞չ վո՞ք: Ի՞նչ յե-  
րաշխիք, կասեն նրանք, վոր վաղը նույնը նա չի անե-  
լու և մեր աշխատանքների ասպարիզում:

Գյուղի ընդհանուր ժողովը կառավարելու համար  
ընտրվում է ֆախագահուքյուն

Այն հանգամանքը, վոր դուռդական խորհրդի նա-  
խագահն է բաց անում ժողովը և ինքն էլ կառավա-  
րում մինչև ժողովի վերջը, պետք է համարել անըն-  
դունելի և աննպատակահարմար: Որենքը պահան-  
ջում է, վոր ժողովի աշխատանքները ղեկավարելու  
համար ժողովականների կողմից ընտրվի նախագա-  
հություն բազկացած յերեք հոգուց: Այդ կազմի մեջ  
կարող է ընտրվել և դուռդխորհրդի լիազորը, կամ  
ներկայացուցիչը, վորը բաց է արել ժողովը:

Ժողովի մասին կազմվում և արձանագրութիւն

Քիչ չեն այնպիսի դեպքեր մեր գյուղերում, յնրբ գյուղացիները ժողով են անում, խոսում են մի հարցի մասին, բերանացի վորոշում են կայացնում ու թողնում ջրվում են ամեն մեկը իրենց տները: Սա անթույլատրելի չէ, վորովհետեւ յեթե վաղը տարածանություններ առաջանան այդ վորոշումների շուրջ կամ կարիք չինի ստուգել վորոշման մանրամասնությունները դժվար կլինի պարզել կայացրած վորոշումների իսկական իմաստը, բովանդակությունը: Այս գրությունից խուսափելու համար որեւէք պարտագրում և, վոր յուրաքանչյուր ժողովի համար կազմվի համապատասխան արձանագրություն (տես գրքույկի վերջում որինակելի ձեւը): Արձանագրությունը ստորագրում են ժողովի նախագահը, քարտուղարը և նախադահության մյուս անդամը: Բոլորովին կարիք չկա, վոր արձանագրության տակ ստորագրեն նաև ներկա յեզոզ գյուղացիները, ինչպես արվում է մի շարք գյուղերում: Կազմված արձանագրության մեկ որինակը հանձնվում և գյուղական խորհրդին, իսկ մյուս որինակը գյուղխորհրդի միջոցով ուղարկվում է պամատակային գործկոմիին: Ընդհանուր ժողովին մասնակցող գյուղացիները, վորոնք համաձայն չեն լինի ժողովի կայացրած վորոշումներին, կարող են կցել արձանագրությանը կամ հանձնել գյուղխորհրդին իրենց առանձին կարծիքը, բերելով այն պատճառարանությունները, վորոնց հիման վրա նրանք ընդհանուր ժողովի վորոշումները համարում են սխալ: Յեթե գյուղացին անգրագետ և, նրա բերանացի հայտարարությունը ժողովի վորոշումներին համաձայն չլինելու մասին, պարտավոր է ժողովի արձանագրության մեջ մտցնել ժողովի քարտուղարը:



Ընդհանուր ժողովում հարցերը վճռվում են բաց  
Բվեարկութեամբ


Գյուղի ընդհանուր ժողովում քննութեան առնչող  
բոլոր հարցերը վճռվում են բաց քվեարկութեամբ:

Այդ նշանակում է, վոր յուրաքանչյուր գյուղացի  
իր կարծիքը, իր համաձայնութիւնը այս կամ այն  
հարցը վորոշելու ժամանակ պարտաւոր է արտահայ-  
տել բաց կերպով և վոչ գաղտնի:

Միաժամանակ յուրաքանչյուր քաղաքացի պետք է  
իմանա, վոր հարցերը վճռվում են ձայների համե-  
մատական կամ, ուրիշ խոսքով ասած, պարզ մեծու-  
ժամանութեամբ: Այստեղ պետք է հասկանալ ձայների  
այնպիսի քանակութիւն, վոր ավելի յե, քան մյուս  
առաջարկութեան համար տրված ձայների քանակու-  
թիւնը, իսկ դեմ յեղողների և ձեռնպահների ձայները  
հաշիւի չեն առնվում:

ԳՅՈՒՂԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ  
ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՊԵՏՔ Ե ՀԱՍՏԱՏՎԵՆ  
ԳՅՈՒՂԻՈՐԶՐԴԻ ԿՈՂՄԻՑ

Գյուղական ընդհանուր ժողովի արձանագրու-  
թիւնը ստանալիս՝ գյուղական խորհուրդը չպետք է  
այդ դնի արկղի մեջ կամ մասայանի արանքում և  
թողնի առանց ուշադրութեան: Գյուղական խոր-  
հուրդը կամ նրա նախագահութիւնը, պարտաւոր են  
հենց առաջիկա նիստում քննութեան առնել ընդհա-  
նուր ժողովի վորոշումները և այդ հաստատել: Յեթե  
քննութեան ժամանակ պարզվեց, վոր ժողովի վորո-  
շումը աննպատակահարմար է, հակաորինական է,  
գյուղական խորհուրդը մերժում է նման վորոշում-  
ները հաստատել և թողնում է անհետեանք: Իր  
վճիռների մասին, վորոնք վերջնական են, գյուղական



խորհուրդը պարտաւոր է տեղեկացնել առաջիկա հերթական ընդհանուր ժողովին: Գյուղական խորհուրդի վորոշումները գյուղի ընդհանուր ժողովը չի կարող մոչ մերացնել և մոչ էլ փոխել:

## ԳՅՈՒՂԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՈՐԻՆԱԿԱՆ ՅԵՎ ՆՊԱՏԱԿԱԶԱՐՄԱՐ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԳՅՈՒՂԻՈՐՇՈՒՐԴԸ ՊԱՐՏԱՎՈՐ Ե Ի ԿԱՏԱՐ ԱԾԵԼ

Յեթե գյուղական ընդհանուր ժողովը վորոշում է կայացրել ու այդ վորոշումը հաստատված է գյուղխորհրդի կողմից, վերջինս պարտաւոր է միջոցներ ձեռք տանել այդ ի կատար ածելու: Իերենք մի որինակ. գյուղական հասարակական ժողովը վորոշում է գյուղը խմելու ջուր անցկացնել, այդ նպատակին հատկացնելով համապատասխան միջոցներ: Գյուղական խորհուրդը այդ վորոշումը իր նիստում հաստատելուց հետո պետք է անմիջապես անցնի գործնական աշխատանքներին. յեթե անհրաժեշտ է, նա պետք է տեխնիկ հրավիրի, ժամանակին դանձի միջոցներ, վարձի վարպետներ, պատրաստի շինարարական նյութեղեն և անցնի կառուցման աշխատանքներին: Այն գյուղական խորհուրդը, վոր ընդհանուր ժողովի վորոշումները կթողնե անկատար, մատը մատին չի խփի աշխատանքները գլուխ բերելու, այդպիսի գյուղխորհուրդը Սորհրդային Իշխանության և հասարակականության կողմից կարժանանա պարտավանքի ու պատասխանատվության:

Գյուղական ընդհանուր ժողովների վորոշումները գյուղխորհրդների կողմից ի կատար ածելու գործողությունների վրա հսկողություն պետք է ունենան գաժառակային կոմիտեները: Սրանք պետք է հսկեն, վոր ընդհանուր ժողովների արձանագրությունները ժամա-

նակին և կանոնադար ուղարկվեն իրենց, այլ վոչ թե № 1 արձանագրութիւնը ուղարկեցին, № 2, 3-ը չի ստացվում, և մեկ ել ուղացած գալիս և № 4 արձանագրութիւնը: Այդպիսի դեպքերում գործկոմը լուր չը պետք և մնա, այլ պետք և ստուշած նկատուութիւն անի:

Ստացված արձանագրութիւնները գալառակային գործկոմի նախագահը պետք և կարգա, հետաքրքրվի կայացրած վորոշումներով, նրանց վերաբերյալ գյուղխորհրդի կողմից կայացրած վճիռներով և իր ապագաբառի միջոցով հսկողութիւն սահմանի, թե արդյոք ի կատար են անվում կայացրած վորոշումները, թե այդպիսիները մնում են թղթի վրա, քնած գյուղխորհրդի գրասենյակում:

## ՊԵՏՔ Ե ԱՇԽՈՒԺԱՑՆԵԼ ՅԵՎ ԿԱՆՈՆԱՎՈՐԵԼ ԳՅՈՒՂԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Մեր նպատակն և այնպիսի պայմաններ ստեղծել, վոր գյուղը հետաքրքրվի իր կյանքին վերաբերող հարցերով, այդ հարցերը մանրամասն կերպով քննի իր ընդհանուր ժողովներում, գործնական վորոշումներ հանի նրանց վերաբերյալ և իր ախտիվ մասնակցութեամբ աջակցի այդ վորոշումների իրագործման:

Մորհրդային գյուղի հասարակական կյանքը պետք և զարգացնել, խորացնել, իսկ այդ նպատակին հասնելու միջոցներից կարևորն և՛ գյուղի քաղաքացիների ընդհանուր ժողովների աշխատանքների կանոնադրումը: Բոլորին հայտնի յե, վոր գյուղի բարձր մարմինը գյուղական խորհուրդն և, սակայն գյուղական իշխանութիւնը այն ժամանակ ամուր կզգա իրեն, այն ժամանակ հնարավորութիւն կունենա արագ քայլերով ա-

«աջ տանել գյուղի տնտեսական, կուլտուրական կյանքի զարգացումը, յեթե նրա հետ միասին ընդհանուր աշխատանքների լծվի հասարակությունը և իր ոժանդակությամբ, աջակցությամբ նպաստի յուրաքանչյուր աշխատանքի հաջող ավարտման :

Գյուղի բնդիակուր ժողովների աշխատանքները պետք է աշխուժացնել, իսկ դրա համար անհրաժեշտ են հետևյալ միջոցները — ամսական անձնավազն մեկ անգամ հրավիրել ընդհանուր ժողով, այդ ժողովներին մասնակից դարձնելով գյուղացիների լայն մասսաները. թե՛ սղամարդկանց և թե՛ կանանց. ժողովների քննության դնել այնպիսի հարցեր, վորոնք իրոք կապված են հասարակության աուրյա կարիքների հետ, բղխում են նրա կենսական շահերից, հարցեր, վորոնք գյուղխորհուրդը մեն-մենակ առանց հասարակական ժողովի քննության հնարավորություն չունի իրականացնել. սակե՞ծել այնպիսի պայմաններ, վոր ժողովին մասնակցող գյուղացիներն ազատ և անկաշկանդ խոսեն ժողովին դրված խնդիրների շուրջը. ընդհանուր ժողովի քննությանն առաջադրելիք բոլոր հարցերը խնամքով ուսումնասիրել, մշակել գյուղխորհրդի նիստերում, նրա սեկչիաներում, վորպեսզի հարցերը ժողովում դնելիս յուրաքանչյուր գյուղացի պարզ հասկանա, թե ի՞նչի մասին է խոսքը, ի՞նչ և ինչպե՞ս պետք է անել, ի՞նչ ոգուտ ունի դրանից գյուղը, պավառը, պետությունը և այլն. ժամանակին քննության առնել գյուղի ընդհանուր ժողովի վորոշումները գյուղխորհրդի նիստերում, նրանց վերաբերյալ գյուղխորհրդի կողմից հանած վճիռները տեղեկացնել ընդհանուր ժողովին. միջոցներ ձեռք առնել ի կատար ածելու ընդհանուր ժողովի նպատակահաճար վորոշումները. գյուղ-հասարակական ժողովներին մոչ պակաս յերկու ամիսը մեկ անգամ լսել

դյուզխորհուրդներն հաշվեալու զեկուցումները, ինչպես նաև զեկուցումներ՝ կառավարութեան հիմնական սրենքներն, վարչումների մասին, փորձնցով զյուզացիութեանը անմիջապէս շահադրդոված և (միասարկի, ինքնահարկման, ճանապարհային շինարարութեան, ամուսնութեան, բնտանիքի, խնամակալութեան, հոգային և այլ սրենքներ)։ Հասարակական ժողովներում զնեղ նաև զյուզի կույտերական ուժերի զեկուցումները (զյուզամանտի, բժշկի, անասնաբուժի, և այլն), փորձնց նոյառակը պետք և լինի հասարակական կյանքի տարբեր ստորեկներն վերարկը յուցմունքներ և զխակիքներ տալ զյուզացիներին։ Հիմնադութեաններն զեմ պայքարելու, մաքրութեան պահպանելու, զյուզամանտութեան մեջ նոր ձևեր և գործիքներ կիրառելու և այլ բնույթ կրող յուցմունքներ։ Եւթեղացնել զալտուտակային գործկոմների հոգութեանը և զյուզի բնշահանուր ժողովների աշխատանքների և զյուզխորհուրդներն կողմից վերջիններն վարչումները ժամանակին ի կատար ուժելու գործութեաններն վրա և այլն։ Գալտուտակային գործկոմի ներկայացուցիչն գործուղել մասնակցելու այն հասարակական ժողովներին, փորտեղ զրված են կարևոր հարցեր։

Կողմակերպչական այս յեղանակները ճիշտ իրագործելու միջոցով հնարավոր կլինի կանոնավորել, աշխուժացնել զյուզական ընդհանուր ժողովների աշխատանքները, կանոնավորել այլ ժողովներն և զյուզական խորհուրդներն փոխ-հարարութեանները, վերջ տալով այն հիմնադոտ յերևութին, յերբ զյուզխորհուրդները փոխարինվում են հասարակական ժողովներով կամ ընդհակառակը, զյուզական խորհուրդները վերցնում են իրենց ձևքը հասարակական ժողովների

իրախներն ու սարտականութիւնները ու այդպիսով թուայնում են դյուզական ընդհանուր ժողովների արդյունափետ գործունեութիւնն և կենդանի մասնակցութիւնը խորհրդային շինարարութիւն մեջ:

Հայկենտղործկոմի Կազմբաժնի Վարիչի  
Տեղակալ՝ Խ. ԳՈՒՆԻՆԵՅԱՆ



ՈՐԻՆԱԿԵԼԻ ԶԵՎ

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվի հուլիսի 25-ին չորեքշաբթի փերեկոյան Տաշատնի գաղտցի շենքում հրավիրուած և գլուզի քաղաքացիների ընդհանուր ժողով:

### ՈՐԱԿԱՐԳ

1. Գլուզական խորհրդի զեկուցումը գլուզի ճանապարհային շինարարութիւն մասին.

Զեկ. ընկ. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

2. Գլուզի հանդապահների վարձելու հարցը.

Զեկ. ընկ. Հ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

3. Ընթացիկ հարցեր:

Գլուզական խորհրդի նախագահ՝ (ԲՖ Փարսապանյան)

22 Հուլիսի 1928 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 25

Դիլիջանի գավառի Շամշաղինի գավառակի N գյուղի քաղաքացիներին 14 Ապրիլի 1928 թ. ընդհանուր ժողովի.

Ընտրողների թիվը ընդամենը	Ընտրողներից ներկային ընդամենը	Վ օ թ ի ց		
		Տղամարդ	Կին	Քյուղիտորների անդամ
200	110	60	30	20

Ժողովը կառավարելու համար ընտրված նախագահության անդամներ

}	1. ՄԱՐՏԻՑ. ՍԱՐԳՍՅԱՆ 2. ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ 3. ԼԵՎՈՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ
---	--


Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Դպրոցի վերակառուցման հարցը . . . . .
2. . . . .
3. . . . .
4. . . . .
5. . . . .

Նախագահում եր՝ Մ. ՍԱՐԳՍՅԱՆ      Քարտուղար՝ Լ. ՍՏԵՓԱՆՅ Ա

Լսեցին	Վորոշեցին	Ի՞նչ վորոշում է ունեցել գյուղխորհուրդը յեվ յերբ (նաստատել, քեկանել, փոխել և)	Դիտողություն կատարման մասին և կատարման ժամկետը
--------	-----------	--	--

1. Դպրոցի վերակառուցման հարցի մասին (Զեկ. Թաղեփոսյան)	1. Դպրոցի վերակառուցման համար գյուղխորհրդի կողմից մշակված և ներկայացված 300 ա. նախահաշիվը հաստատել և գանձել ինքնահարկման կարգով.	1. Կատարել 300 ա. բաշխում ըստ անտեսությունների և բաշխման ցուցակը գյուղհաս. ժողովի վորոշման հետ ներկայացնել գավառակային Գործակոմին ի հաստատության (Քյուղ խորհրդի 1928 թ. Ապրիլի 15-ի նիստի № 15 արձ. կ. 2)	1. Հաստատելու ընդհ. ժողովի վորոշումը և բաշխման ցուցակները հաստատված են գավառակային գործակոմի կողմից Ապրիլի 22-ինիտում, վորի հիման վրա գանձված է 300 ա.
2 . . . . .	2 . . . . .	2 . . . . .	2 . . . . .



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0003455

ԳԻՆՆ Ե 15 Կ.

074.

A  $\frac{\text{II}}{23611}$